Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գագիկ Զարմավիրի Բաղադյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Տարածքային զարգացումը բարդ և դինամիկ գործընթաց է, որին բնորոշ չեն ստատիկություն և համաչափություն, ինչը ենթադրում է, որ կախված այդ զարգացումը պայմանավորող գործոններից՝ զարգացման գործընթացը կարող է կրել տարբեր բնութագրիչներ: Սակայն այդ գործընթացի մեծագույն հիմնախնդիրը տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև առկա անհամաչափությունն է:

Տարածքային զարգացման անհամաչափությունները հիմնախնդիր են յուրաքանչյուր երկրի համար, քանի որ այդ անհամաչափությունները հանգեցնում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունների կորստի: Այս պարագայում պետական կառավարման մարմինների խնդիրն է իրագործել այնպիսի քաղաքականություն, որը ուղղված կլինի տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն, դրանց ձևավորումը կանխելուն և առկա հետևանքները չեզոքացնելուն:

Նշյալ խնդիրների ապահովմանն ուղղված քաղաքականությունը երկրի տարածքային քաղաքականությունն է՝ տարածքային համաչափ զարգացման ապահովման նպատակադրմամբ:

Հիմնախնդիրը ավելի քան արդիական է նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի ՀՀ-ում ձևավորվել է մի իրավիճակ, երբ առկա են տարածքային զարգացման խորը անհամաչափություններ, որոնք տարեցտարի ավելի են ընդլայնվում:

Սա նշանակում է, որ առկա է անհրաժեշտություն՝ ուսումնասիրելու ՀՀ տարածքային զարգացման գործընթացը, գնահատելու զարգացման անհամաչափությունների աստիճանը, դուրսբերելու անհամաչափությունների աղբյուրները և մշակելու կառուցակարգեր, որոք կնպաստեն ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանի մեղմմանը:

Այս համատեքստում հետազոտության թեման արդիական է, իսկ հիմնախնդրի լուծման ուղիների նախանշումը՝ անհրաժեշտություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները. Հետազոտության հիմնական *նպատակն* է՝ «գնահատել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ներկայիս մակարդակը, դուրս բերել ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները և առաջ քաշել կառուցակարգեր, որոնք կարող են նպաստել ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործմանը և հիմնախնդիրների լուծմանը»: Նշյալ նպատակի իրագործման համար սահմանվել են հետևյալ *խնդիրները*.

1. ուսումնասիրել տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունը և հիմնական առանձնահատկությունները,
2. մշակել մոդել, որի կիրառմամբ, վիճակագրության առկայության պայմաններում, հնարավոր կլինի դինամիկ կերպով չափել տարբեր երկրների տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը, ինչպես նաև կիրառել նշյալ մոդելը մի շարք երկրների համար,
3. ուսումնասիրել տարածքային զարգացման անհամաչափությունների միջազգային փորձը և առանձնացնել այն երկրները, որոնց տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն նվազման միտում, ինչը թույլ կտա նման հաջող փորձ ունեցող երկրների տարածքային քաղաքականությունների ուսումնասիրությամբ որոշակի տարրեր տեղայնացնել ՀՀ-ում,
4. ուսումնասիրել ՀՀ տարածքային քաղաքականությունը, տարածքային զարգացման համապետական, մարզային և համայնքային ռազմավարություններն ու ծրագրերը՝

բացահայտելով դրանցում առկա հիմնախնդիրները և այն ուժեղ կողմերը, որոնց հիման վրա հնարավոր կլինի ապահովել քաղաքականության կատարելագործում,

5. իրականացնել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատում, որը կհիմնվի ինչպես ցուցանիշների դինամիկ և կառուցվածքային ուսումնասիրության, այնպես էլ մոդելային գնահատումների վրա,
6. հետազոտել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, ինչպես նաև գնահատել, թե որքանով են համայնքների ֆինանսական կարողությունները բխում ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացում ապահովելու գաղափարախոսությունից,
7. մշակել կառուցակարգեր, որոնք կնպաստեն համայնքների ֆինանսական կարողությունների բարելավմանը, կհանգեցնեն ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացման և ուղղված կլինեն ՀՀ տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելուն»:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը. Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը 178 էջ է՝ առանց հավելվածների:

Ատենախոսության *ներածությամբ* ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, հիմնական նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը և դրանց կիրառականությունը:

Առաջին՝ *«Տնտեսության տարածքային զարգացման հիմքերն ու հիմնական բնութագրերը»* գլխում հեղինակի կողմից ուսումնասիրվել են տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունը, դրանց հիմնական բնութագրիչները: Այս գլխով հեղինակը մշակել է տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել՝ հիմնված 9 ցուցանիշների և փորձագիտական գնահատումների վրա: Մոդելը

կիրառվել է զարգացման տարբեր մակարդակներ ունեցող 15 երկրներում տարածքային միավորների զարգացման մակարդակները գնահատելու և զարգացման անհամաչափությունների աստիճանը որոշելու համար: Զարգացման անհամաչափությունների աստիճանի նվազման միտում ունեցող երկրները համարվել է էտալոնային, որոնց տարածքային քաղաքականության գործիքներին ատենախոսությունում առկա է անդրադարձ:

Ատենախոսության երկրորդ՝ *«ՀՀ տարածքային զարգացման հիմնական առանձնահատկությունները»* գլխում ուսումնասիրվել են ՀՀ տարածքային զարգացման քաղաքականությունը և ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը: Հեղինակը անդրադարձել է ՀՀ տարածքային քաղաքականությանը, այնուհետև գնահատել է ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը և գլուխը ամփոփել ՀՀ համայնքների ֆինանսական հնարավորությունների և դրանց՝ զարգացման մակարդակի հետ ունեցած համապատասխանության ուսումնասիրությամբ:

Ատենախոսության երրորդ՝ *«ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման մոտեցումները»* գլուխը առավելապես վերաբերում է հետազոտության երկրորդ գլխում առաջադրված հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկներին: Առաջարկների առաջին խումբը միտված է համայնքների ֆինանսական կարողությունների բարելավման այնպիսի մեխանիզմների ներկայացման, որոնք նաև նպաստում են համայնքների ֆինանսական կարողությունների մասով անհամաչափությունների կրճատմանը: Առաջարկությունների երկրորդ խմբով ներկայացված են բուն քաղաքականության կատարելագործման կառուցակարգեր:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծության առաջնային եզրահանգումները և ընդհանրացված առաջարկները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գիտագործնական նշանակությունը. Կատարված հետազոտության օբյեկտը ՀՀ

տարածքային զարգացումն է՝ որպես գործընթաց և որպես համակարգ, իսկ հետազոտության առարկան ՀՀ տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներն են ու վերջիններիս լուծմանն ուղղված մոտեցումները:

Ատենախոսության համար տեսամեթոդական և տեղեկատվական աղբյուր են հանդիսացել հայաստանյան և օտարազգի հետազոտողների կողմից կատարված մի շարք հետազոտություններ, ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ՀՀ և մի շարք այլ երկրների պաշտոնական վիճակագրական մարմինների, ՀՀ պետական մարմինների և ՏԻՄ-երի հրապարակումներ: Ատենախոսության շրջանակներում կիրառվել են դինամիկ և կառուցվածքային դիտարկումների, վիճակագրական փաթեթի կիրառմամբ գործոնային վերլուծության, փորձագիտական գնահատում-հարցումների և այլ մեթոդներ: Ատենախոսությունում ներկայացված թվով 71 աղյուսակներ և գծապատկերներ:

Հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործման գործընթացում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը. Ատենախոսության գիտական նորույթները, ըստ հեղինակի, հետևյալներն են.

1. Սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող թվով 9 ցուցանիշների և փորձագիտական գնահատում-հարցումների հիման վրա մշակվել է երկրների տարածքային միավորների զարգացման ինդեքսների և տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել, որը հեղինակի կողմից կիրառվել է թվով 16 երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար (2012-2021 թթ. տվյալներով):
2. ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների որակական և քանակական գնահատման համար հեղինակի կողմից մշակվել և առաջարկվել է մոդել, որը հիմնված է թվով 19 ցուցանիշների և SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ գործոնային վերլուծության վրա (2021 թ. տվյալներով):

3. ՀՀ համայնքների բյուջետային կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության բացահայտման նպատակով մշակվել է մեթոդաբանություն՝ հիմնված քվանտիլային խմբերի կիրառման ու արդյունքների համադրման վրա:
4. Մշակվել են համայնքների ֆինանսական կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության ապահովմանն ուղղված կառուցակարգեր, այդ թվում՝ ներկայացվել են դոտացիաների հաշվարկման և եկամտային հարկից ու շահութահարկից մասհանումների իրականացման մոդելներ, տրվել են դրանց արդյունավետության գնահատականները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են նաև որոշ թերություններ, որոնք ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակի կողմից ատենախոսության շրջանակներում առավել մանրամասն անդրադարձ կատարվեր նաև ՀՀ համայնքների խոշորացման գործընթացին և դրա միջոցով ստացված արդյունքներին, քանի որ ենթադրվում է, որ համայնքների խոշորացումը՝ որպես ՀՀ տարածքային քաղաքականության գործիք, պետք է նաև միտված լիներ ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը:

2. Հեղինակի կողմից ատենախոսության 2.1 ենթագլխում անդրադարձ է կատարվում ՀՀ տարածքային զարգացման ռազմավարությանը, ՀՀ մարզերի զարգացման ռազմավարություններին և համայնքների զարգացման ծրագրերին: Հեղինակը վերլուծել է ՀՀ տարածքային զարգացման ռազմավարությունը, սակայն նույն խորությամբ չի անդրադարձել մարզերի զարգացման ռազմավարություններին և համայնքային զարգացման ծրագրերին, այնինչ նմանատիպ վերլուծությունը կարող էր ստեղծել հնարավորություն՝ բացահայտելու ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը խոչընդոտող բազմաթիվ այլ գործոններ:

3. Ատենախոսության 3.1 ենթագլխում՝ համայնքների ֆինանսական կարողությունների բարձրացման համատեքստում, հեղինակը առաջարկում է դիտարկել ՀՀ-ում մարզպետների ինստիտուտի պահպանման նպատակահարմարությունը: Որքան էլ որ հեղինակը ճիշտ է նկատել մարզպետների ինստիտուտի ոչ գործուն համակարգի գոյությունը, այնուամենայնիվ, աշխատանքը կշահեր, եթե այս մասով առաջարկները լինեին առավել հստակ, չափելի և թիրախային:

4. Հեղինակի կողմից ատենախոսության 3.1 ենթագլխում առաջարկվում է շահութահարկից մասհանումների իրականացման կառուցակարգ: Այնուամենայնիվ, առաջարկվող կառուցակարգը, որքան էլ որ ըստ հեղինակի կողմից կատարված չափումների արդյունավետ է, միևնույն է, դժվար կիրառելի է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման համակարգերում առկա ենթակառուցվածքների միջոցով: Հետևաբար, աշխատանքը կշահեր, եթե ֆինանսական կառուցակարգի համար ներկայացվեր ներդրման որոշակի գործընթաց:

5. Հեղինակի կողմից ուսումնասիրվել են համայնքների ֆինանսական կարողությունները, բացահայտվել է, որ համայնքները գտնվում են մեծ կախման մեջ ՀՀ պետական բյուջեից ստացվող դոտացիաներից և սուբվենցիաներից: Հեղինակը մանրամասն անդրադարձել է դոտացիաների հաշվարկման համակարգին, ավելին, ներկայացրել վերջինիս կատարելագործման ուղիներ, սակայն ատենախոսությամբ բավարար անդրադարձ չի կատարվել սուբվենցիոն ծրագրերին, այնինչ ենթակառուցվածքների զարգացման առումով էական է սուբվենցիոն ծրագրերի ուսումնասիրությունը, այն դեպքում, երբ հենց ենթակառուցվածքներն են մեծամասամբ պայմանավորում տարածքային միավորների զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները էականորեն չեն ազդում հետազոտության գիտական արժեքի վրա: ***Գագիկ Զարմավիրի Բաղադյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում»*** թեմայով

ատենախոսությունը ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են Scopus շտեմարանում ինդեքսավորված 1 միջազգային հոդվածում, ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում տպագրված 8 գիտական հոդվածներում և գիտաժողովի նյութերում հրապարակված 1 հոդվածում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, ***Գագիկ Զարմավիրի Բաղադյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը*** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՊՏՀ Գիտության բաժնի պետ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Տ.Ս. Մարտիրոսյան**
16. հուլիսի 2024թ.

ՏԻԳՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ. Դարբինյան**
16. հուլիսի 2024թ.